ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 22.04.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ՆԳ-2020/77

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 09.04.2020թ. թիվ 26/26-1/5311-2020 գրությամբ «Պահապան» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պաշտպանության նախարարության (հետայսու նաև՝ Պատվիրատու) 08.04.2020թ. թիվ ՊՆ/ՊՆ/02/1172-2020 գրության հիման վրա, 09.04.2020թ. թիվ 26/26-1/5311-2020 գրությամբ նախաձեռնել է «Պահապան» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. <u>«Պահապան» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Պահապան» ՍՊԸ-ն Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին 14.04.2020թ. ուղղված գրությամբ հայտնել է, որ ուսումնասիրելով ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ՀՀ ֆինանսների նախարարություն ներկայացված հիմնավորումները գտնում է, որ դրանք թերի են և հիմնազուրկ հետևյալ պատճառաբանություններով՝

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 417-րդ հոդվածի համաձայն՝ պարտապանը պարտավորությունը չկատարելու և (կամ) անպատշաճ կատարելու համար պատասխանատու է մեղքի առկայության դեպքում: Պարտապանը ճանաչվում է անմեղ, եթե ապացուցվում է, որ ինքը պարտավորությունը պատշաճ կատարելու համար ձեռնարկել է իրենից կախված բոլոր միջոցները:

ՀՀ պաշտպանության նախարարության և «Պահապան» ՍՊԸ-ի միջև 12.02.2019թ. կնքված «ԷԱՃԱՊՁԲ-7/29-2» ծածկագրով գնման պայմանագրով և կից 29.04.2019թ. կնքված N 1 համաձայնագրով «Պահապան» ՍՊԸ-ն ՀՀ պաշտպանության նախարարությանն առավելագույնը մինչև 31.10.2019թ. պետք է մատակարարեր 50 000 զույգ հինգմատնյա ձեռնոցներ: «Պահապան» ՍՊԸ-ն պայմանագրում սահմանված ժամկետներում պատշաճ կերպով ՀՀ պաշտպանության նախարարությանն է մատակարարել 30 000 զույգ հինգմատնյա ձեռնոցներ ամբողջությամբ, իսկ մնացած 20 000 զույգ ձեռնոցները չի մատակարարվել:

Ընկերությունը հայտնել է, որ առավելապես կատարել է ստանձնած պայմանագրային պարտավորությունները, իսկ նշված մասնակի մատակարարված ապրանքատեսակի չմատակարարելու հանգամանքում բացակայում է «Պահապան» ՍՊԸ-ի «մեղքը», քանի որ, ինչպես հաճախ է պատահում, Պատվիրատուն ուշացումներով և ձգձգումներով է կնքում պայմանագրերը և համաձայնագրերը, նախորդ տարիներին բազմիցս իրազեկված լինելով, որ արտադրության կազմակերպման և պայմանագրային պարտավորությունների կատարման համար «Պահապան» ՍՊԸ-ն հումքը և այլ պարագաները ներկրում է արտասահմանից, որը տևում է շուրջ 4 ամիս:

Ընկերությունը նշել է, որ «ԷԱՃԱՊՁԲ-7/29-2» ծածկագրով մրցույթի բացումը տեղի է ունեցել 14.12.2018թ., մինչդեռ պայմանագիրը կնքվել է 12.02.2019թ. (շուրջ 2 ամիս անց), իսկ համաձայնագիրը կնքվել է 29.04.2019թ. (շուրջ 5 ամիս անց):

Պաշտպանության նախարարության կողմից նշված քանակություններով ամիսների անհիմն ու ապօրինի (պետական գնումների օրենսդրության խախտումներով) բացթողումների, շուրջ 4 ամիս տևող հումքի պատվիրման, պատրաստման և ՀՀ ներկրման պայմաններում Ընկերությանը տարվա ընթացքում մնացել է ընդամենը 3 ամիս ժամկետ բուն արտադրությամբ զբաղվելու և այդ ամիսների ընթացքում ամբողջ տարվա համար նախատեսված պայմանագրային պարտավորությունները կատարելու համար, ինչը

իրատեսական չէ: Այսինքն՝ Պատվիրատուի հիշյալ ուշացումները և ձգձգումներն են ձեռնոցների թերմատակարարման միակ պատճառը:

Վերը հիշատակված չմատակարարված ապրանքատեսակների հումքը Ընկերությունից անկախ պատճառներով (Լարսի անցակետը 2019թ. հոկտեմբեր-դեկտեմբեր ամիսներին փակ լինելու և հերթերի գոյացման պատճառով) Ընկերությանը հասել են 2019թ.-ի դեկտեմբեր ամսին:

Ընկերությունը 10.12.2019թ. թիվ 06/12 գրությամբ ՀՀ պաշտպանության փոխնախարար Մ.Ղամբարյանին հայտնել է հումքի ուշացման պատճառների, հումքի ստացման և արտադրության վերսկսման մասին, խնդրելով համաձայնել մնացած ապրանքատեսակների քանակությունները 2020թ. հունվար ամսվա աշխատանաքային առաջին 20 օրերի ընթացքում մատակարարելուն՝ պատրաստակամություն հայտնելով անհրաժեշտության դեպքում ներկայացնելու համապատասխան բանկային երաշխիքներ և ուշացումների համար վճարելու տույժեր և տուգանքներ: Բանկային երաշխիքի առկայության պայմաններում իրավունք ունենալով ապրանքատեսակների քանակությունների 25 %-ի մատակարարումը փոխանցելու հաջորդ տարի, Պատվիրատուն, անհայտ պատճառներով, չի բավարարել Ընկերության խնդրանքը (գրավոր չի հայտնել մեր խնդրանքը բավարարելու կամ մերժելու մասին), ինչի պատճառով մինչ օրս չմատակարարված վերը հիշատակված ձեռնոցները պատրաստի վիճակում գտնվում են Ընկերության պահեստում: 2020թ. հունվար ամսվա վերջին Ընկերությունն այդ մասին բազմիցս տեղեկացրել է ՊՆ ՆՏԱԴ ղեկավարությանը, պատրաստակումություն հայտնելով դրանք առաքել իրենց նշված տեղերը: Սակայն, ՆՏԱԴ-ի ղեկավարությունը հրաժարվել է ընդունել ձեռնոցները, պատճառաբանելով, որ ֆինանսական տարին ավարտվել է, իսկ 2020 թվականի համար դրամական միջոցներ հատկացված չեն ձեռնոցները գնելու համար, իսկ արդեն միայն 31.03.2020թ. ՀՀ պաշտպանության նախարարությունը միակողմանի լուծել է վերը հիշատակված պայմանագիրը:

Ընկերության կողմից ՊՆ ՆՏԱԴ պետին 07.04.2020թ. ուղարկվել է N Պ-013 գրությունը, որով Ընկերությունը հայտնել է, որ 17.03.2020թ.-ից, ելնելով երկրում ստեղծված արտակարգ իրավիճակից, ամբողջովին դադարեցրել է աշխատանքային գործունեությունը և խնդրել է հարցին անդրադառնալ արտակարգ իրադրության վերացումից հետո, պարզելու համար, թե ում մեղքով է տեղի ունեցել 20 000 զույգ ձեռնոցի մատակարարման ուշացումը:

Ընկերությունը նշել է, որ Պայմանագրի 2.1.1 կետերում շեշտված է, որ Գնորդը իրավունք ունի հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 30 օրից ավելի, և այն, որ նման պայմաններում տարակուսելի է, թե ինչու Պատվիրատուն պայմանագիրը չի լուծել վերջնաժամկետից 30 օր անց՝ 30.11.2019թ:

Ամփոփելով վերոգրյալը՝ Ընկերությունը խնդրել է «Պահապան» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

Որպես հիմանավորում վերոնշածի՝ Ընկերություն 21.04.2020թ. գրությամբ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացրել է չմատակարարված 20 000 զույգ ձեռնոցի արտադրության կազմակերպման համար անհրաժեշտ ներմուծված ապրանքների ՀՀ ներկրման հայտարարագրերը, որոնց մասին Պատվիրատուն ևս տեղեկացվել է:

«Պահապան» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2020/77 ընթացակարգի շրջանակներում 16.04.2020թ. ժամը 10:20-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. <u>ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

ՀՀ պաշտպանության նախարարությունը ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 08.04.2020թ. թիվ ՊՆ/ՊՆ/02/1172-2020 գրությամբ հայտնել է, որ, հիմք ընդունելով ՀՀ պաշտպանության նախարարության և «Պահապան» ՍՊԸ-ի միջև կնքված գնման պայմանագրի 2.1.7.1 կետի բ) ենթակետի պահանջը՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը 2020թ. մարտի 30-ին միակողմանի մասնակի լուծել է «Պահապան» ՍՊԸ-ի հետ 12.02.2019թ. կնքված թիվ «ԷԱՃԱՊՁԲ-7/29-2» գնման պայմանագիրն (հետայսու նաև՝ Պայմանագիր) ու կից 29.04.2019թ. կնքված N 1 համաձայնագիրը:

Միաժամանակ տեղեկացրել է, որ վերոնշյալ պայմանագրի և համաձայնագրի լուծման վերաբերյալ գրությունը 31.03.2020թ. հրապարակվել է www.gnumner.am հասցեով ինտերնետային կայքում:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2020/77 ընթացակարգի շրջանակներում 16.04.2020թ. ժամը 10:20-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2020/77 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2020/77 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. ՀՀ պաշտպանության նախարարության և «Պահապան» ՍՊԸ-ի միջև 12.02.2019թ. կնքվել է «ԷԱՃԱՊՁԲ-7/29-2» ծածկագրով ապրանքի մատակարարման պայմանագիր, որի 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ «Պահապան» ՍՊԸ-ն պարտավորվել է Պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված ապրանքը, իսկ գնորդը պարտավորվել է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. Պայմանագրի շրջանակներում կողմերի միջև 29.04.2019թ. կնքվել է N 1 համաձայնագիրը, որին կից հավելվածով՝ գնման ժամանակացույցով, 50000 զույգ «Ձեռնոց՝ հինգ մատնյա ֆլիզից» ապրանքատեսակի մատակարարման ժամկետ է սահմանվել 2019թ. ըստ եռամսյակների՝ 2-րդ եռամսյակ՝ 20000 զույգ, 3-րդ եռամսյակ՝ 20000 զույգ և 4-րդ եռամսյակ՝ ոչ ուշ, քան 31.10.2019թ.՝ 10000 զույգ:

3. «Պահապան» ՍՊԸ-ին ուղղված 31.03.2020թ. թիվ ԴՎԱ/1198 ծանուցմամբ ՀՀ պաշտպանության նախարարությունը հայտնել է, որ ՀՀ պաշտպանության նախարարության և «Պահապան» ՍՊԸ-ի միջև 12.02.2019թ. կնքված թիվ «ԷԱՃԱՊՁԲ-7/29-2» պայմանագրի և դրա հիման վրա 29.04.2019թ. կնքված N 1 համաձայնագրի համաձայն՝ վերջինս պարտավոր էր ՀՀ պաշտպանության նախարարությանը 2019թ. մատակարարել 50000 զույգ «Ձեռնոց՝ հինգ մատնյա ֆլիզից», որից չի մատակարարվել 20000 զույգ:

Ամփոփելով վերոգրյալը՝ Պատվիրատուն հայտնել է, որ, հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7.1 ենթակետի բ) պարբերության պահանջը, ՀՀ պաշտպանության նախարարությունը 30.03.2020թ. միակողմանի մասնակի լուծում է Պայմանագիրը:

4. Պատվիրատուի կողմից www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքում 31.03.2020թ. հրապարակվել է Պայմանագիրը միակողմանի մասնակի լուծելու մասին ծանուցումը:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 09.04.2020թ. թիվ 26/26-1/5311-2020 գրությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 08.04.2020թ. թիվ ՊՆ/ՊՆ/02/1172-2020 գրությունը և կից փաստաթղթերը, «Պահապան» ՍՊԸ-ի 14.04.2020թ. գրությունը՝ կից փաստաթղթերով, հայտնում եմ հետևյալը.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը:

Նույն օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

ՀՀ պաշտպանության նախարարության և «Պահապան» ՍՊԸ-ի միջև 12.02.2019թ. կնքվել է «ԷԱՃԱՊՁԲ-7/29-2» ծածկագրով ապրանքի մատակարարման պայմանագիր, որի 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ «Պահապան» ՍՊԸ-ն պարտավորվել է Պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված ապրանքը, իսկ գնորդը պարտավորվել է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

Պայմանագրի շրջանակներում կողմերի միջև 29.04.2019թ. կնքվել է N 1 համաձայնագիրը, որին կից հավելվածով՝ գնման ժամանակացույցով, 50000 զույգ «Ձեռնոց՝ հինգ մատնյա ֆլիզից» ապրանքատեսակի մատակարարման ժամկետ է սահմանվել 2019թ. ըստ եռամսյակների՝ 2-րդ եռամսյակ՝ 20000 զույգ, 3-րդ եռամսյակ՝ 20000 զույգ և 4-րդ եռամսյակ՝ ոչ ուշ, քան 31.10.2019թ.՝ 10000 զույգ:

«Պահապան» ՍՊԸ-ին ուղղված 31.03.2020թ. թիվ ԴՎԱ/1198 ծանուցմամբ ՀՀ պաշտպանության նախարարությունը հայտնել է, որ ՀՀ պաշտպանության նախարարության և «Պահապան» ՍՊԸ-ի միջև 12.02.2019թ. կնքված թիվ «ԷԱՃԱՊՁԲ-7/29-2» պայմանագրի և դրա հիման վրա 29.04.2019թ. կնքված N 1 համաձայնագրի համաձայն՝ վերջինս պարտավոր էր ՀՀ պաշտպանության նախարարությանը 2019թ. մատակարարել 50000 զույգ «Ձեռնոց՝ հինգ մատնյա ֆլիզից», որից չի մատակարարվել 20000 զույգ:

Ամփոփելով վերոգրյալը՝ Պատվիրատուն հայտնել է, որ, հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7.1 ենթակետի բ) պարբերության պահանջը, ՀՀ պաշտպանության նախարարությունը

30.03.2020թ. միակողմանի մասնակի լուծում է Պայմանագիրը:

Պատվիրատուի կողմից www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքում 31.03.2020թ. հրապարակվել է Պայմանագիրը միակողմանի մասնակի լուծելու մասին ծանուցումը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը սահմանում է, որ ***մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը:***

Պայմանագրի 2.1.7-րդ կետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը, եթե վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

Պայմանագրի 2.1.7.1-րդ ենթակետի համաձայն՝ վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) Մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք, որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում,

բ) Ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 30 օրից ավելի:

Այսպիսով՝ Ընկերությունը, Պայմանագրի համաձայն, պարտավոր էր ՀՀ պաշտպանության նախարարությանը մատակարարել 50000 զույգ «Ձեռնոց՝ հինգ մատնյա ֆլիզից», ապրանքատեսակի մատակարարման ժամկետ է սահմանվել 2019թ. ըստ եռամսյակների՝ 2-րդ եռամսյակ՝ 20000 զույգ, 3-րդ եռամսյակ՝ 20000 զույգ և 4-րդ եռամսյակ՝ ոչ ուշ, քան 31.10.2019թ.՝ 10000 զույգ, որից, ըստ գործում առկա նյութերի, չի մատակարարել 20000 զույգը:

Պատվիրատուի կողմից www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքում 31.03.2020թ. հրապարակվել է Պայմանագիրը միակողմանի մասնակի լուծելու մասին ծանուցումը:

Միաժամանակ արձանագրում եմ, որ «Պահապան» ՍՊԸ-ն գրությամբ (ՀՀ պաշտպանության նախարարության մուտք 10.12.2019թ.) դիմել է ՀՀ պաշտպանության նախարարությանը և հայտնել հետևյալը.

««Պահապան» ՍՊԸ-ն համաձայն ՀՀ ՊՆ հետ կնքված պայմանագրերի՝ պետք է արտադրեր և մատակարարեր հանդերձանքներ, քանի որ ամբողջ հումքը ձեռք է բերվում արտասահմանից և պատվիրելուց մինչև ներկրում ցիկլը տևում է առնվազն 4-5 ամիս, որից

հետո կազմակերպվում է արտադրություն և մատակարարում, հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ընկերությունը պայմանագրերը և համաձայնագրերը ստացել է ս.թ. մայիս ամսից մինչև սեպտեմբեր ընկած հատվածներում, որոշ պայմանագրերի ամբողջական կատարումն Ընկերության կողմից հնարավոր չի եղել իրականացնել «ԳՀԱՊՁԲ-7/40-3» պայմանագրով պակաս է մատակարարվել 2847000 դրամի չափով, «ԳՀԱՊՁԲ-7/41-3» պայմանագրով՝ 9324360 դրամի չափով, «ԷԱՃԱՊՁԲ-7/22-1» պայմանագրով՝ 8637900 դրամի չափով, **«ԷԱՃԱՊՁԲ-7/29-2» պայմանագրով՝ 17604973 դրամի չափով,** «ԷԱՃԱՊՁԲ-7/37-2» պայմանագրով՝ 2851764 դրամի չափով, «ԷԱՃԱՊՁԲ-7/26-1» պայմանագրով՝ 7262633,5 դրամի չափով և «ԳՀԱՊՁԲ-7/60-1» պայմանագրով՝ 2462400 դրամի չափով:

Ուշացումները եղել են օբյեկտիվ և սուբյկտիվ պատճառներով, ամբողջությամբ թերի մնացած հանդերձանքների հումքը արդեն իսկ ներկրված է և գտնվում է արտադրության պրոցեսում, բայց ելնելով ստեղծված իրավիճակից՝ խնդրում ենք հնարավորություն ընձեռել Ընկերությանը՝ տրամադրել 2020թ. 20 աշխատանքային օր և Ընկերությունն ամբողջությամբ հանդերձանքը կմատակարարի, համապատասխան բանկային երաշխիք կներկայացնի և պատրաստ է համապատասխան տույժ և տուգանքներ ուշացման համար վճարել»:

Միաժամանակ արձանագրում եմ, որ Ընկերությունը Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին հայտնել է, որ մինչ օրս վերը նշված գրությանն այդպես էլ ՀՀ պաշտպանության նախարարությունը չի պատասխանել, և, եթե հաշվի առնվի, որ վերը նշված թերի մնացած հանդերձանքների հումքը ՀՀ-ում էին արդեն դեկտեմբեր ամսին, ինչի մասին վկայում են մաքսազերծման փաստաթղթերը, ինչպես նաև այն հանգամանքը, որ Ընկերությունը 10.12.2019թ. ՀՀ պաշտպանության նախարարությանն ուղղված գրությամբ հայտնել է, որ հումքն արդեն իսկ ներկրված է և գտնվում է արտադրության պրոցեսում և ապրանքը կարող է մատակարարվել հունվար ամսվա առաջին 20 աշխատանքային օրվա ընթացքում, իսկ ՀՀ պաշտպանության նախարարությունը, Ընկերության կողմից ներկայացված գրությանն այդպես էլ չպատասխանելով, լուծել է Պայմանագիրը 30.03.2020թ., ստացվում է, որ, երկարաձգելով Պայմանագիրը մինչև 2020թ. հունվար ամսվա առաջին 20 աշխատանքային օրը լրանալը, «Պահապան» ՍՊԸ-ն կմատակարարեր նաև մնացած 20000 զույգը:

Այսպիսով՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը իր և «Պահապան» ՍՊԸ-ի միջև

12.02.2019թ. կնքված թիվ «ԷԱՃԱՊՁԲ-7/29-2» ծածկագրով պայմանագիրը միակողմանի մասնակի լուծել է 30.03.2020թ.՝ Ընկերության կողմից իր պայմանագրային պարտավորությունները չկատարելու հիմքով:

Հաշվի առնելով Ընկերության կողմից ներկայացված փաստական հանգամանքները և դրանք համադրելով Պատվիրատուի Պայմանագրի լուծմանն ուղղված գործողությունների և ժամկետների հետ, գտնում եմ, որ տվյալ դեպքում Պայմանագրով սահմանված ապրանքների մատակարարման վերջնաժամկետից շուրջ 5 ամիս հետո Պայմանագրի լուծելու պայմաններում Ընկերությունն ըստ էության տեղեկացված չի եղել Պայմանագրով ստանձնած պարտականությունները կատարելու հնարավորության մասին:

Այսպիսով՝ ուսումնասիրելով գործում առկա նյութերը, գտնում եմ, որ Ընկերության վարքագիծը չի կարող գնահատվել, որպես «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի խախտում, քանի որ Ընկերությունը նման պայմաններում օբյեկտիվորեն զրկված է եղել Պայմանագրի շրջանակներում ստանձնած պարտականությունները մինչև Պայմանագրի միակողմանի լուծելը կատարելուց:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 09.04.2020թ. թիվ 26/26-1/5311-2020 գրությամբ «Պահապան» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**